10058769

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Ն 01/7235-13
03.12.2013թ.

*0078 Երևան, Հալաբյան 41 ա, հեռ. 380389*
*Էլ. փոստ՝ press@moj.am*

**ՀՀ կենտրոնական բանկի նախագահ**
**պարոն Ա. Ջավադյանին**

**Ի պատասխան Ձեր 2013 թվականի նոյեմբերի 22-ի**
**15.1-06/001033-13 թվակիր նամակի**

**Հարգելի պարոն Ջավադյան**

Կից ներկայացնում ենք «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի առնչությամբ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության պետական փորձագիտական եզրակացությունը, ինչպես նաև հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման վերաբերյալ եզրակացությունը:

**Հարգանքով՝**

ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅՈՒՆ
СЕКРЕТАРИАТ

**Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ**

**Կատարող՝ իրավական ակտերի փորձաքննության գործակալություն**
**Ս. Առաքելյան հեռ. 380-227**

**ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

**«Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ**

1. Օրենքի նախագիծը (այսուհետ՝ նախագիծ) համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Նախագիծը համապատասխանում է հավասար իրավաբանական ուժ ունեցող իրավական այլ ակտերի դրույթներին:

3. Նախագծում իրավական այլ ակտերի նորմերի անհարկի կրկնություններ առկա չեն:

4. Իրավական ակտում համապատասխան լրացում կատարելու անհրաժեշտությունն առկա է:

5. Նախագծում անհրաժեշտ բոլոր հարցերը կարգավորված են:

6. Նախագիծն իր մեջ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետով նախատեսված որևէ կոռուպցիոն գործոն չի պարունակում:

7. Օրենսդրական տեխնիկայի կանոնները մասամբ պահպանված չեն: Այսպես՝

1) Նախագծի 1-ին հոդվածում անհրաժեշտ է ճիշտ նշել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի լրիվ անվանումը, մասնավորապես՝ հիշյալ հոդվածում նշված «1 սեպտեմբեր 1998 թվականի» բառերն անհրաժեշտ է փոխարինել «1998 թվականի հուլիսի 1-ի» բառերով՝ համաձայն «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի պահանջների:

2) Նախագծի 1-ին հոդվածում նշված «կետը» բառն անհրաժեշտ է փոխարինել «մասը» բառով՝ նկատի ունենալով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները:

8. Նախագիծն անհրաժեշտ է համապատասխանեցնել սույն եզրակացության 7-րդ կետին:

**Իրավական ակտերի փորձաքննության գործակալության պետ՝** **Կ. ԽՏՐՅԱՆ**

**ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ**

**«Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ**

«Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծն իր մեջ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետով նախատեսված որևէ կոռուպցիոն գործոն չի պարունակում:

**Իրավական ակտերի փորձաքննության գործակալության պետ՝** **Կ. ԽՏՐՅԱՆ**